ճանաչվեն, վերջապէս ստացաւ խոստացած երկիրները։ Ոչ թէ միայն Զերնոգորիան, այլ և Ցունաստանը իր յոյսերը իրագործված տեսաւ, միացաւ իր կրօնակիցների և արիւնակիցների հետ, որոնք դարերի ընթացքում ճնշված էին օտարի լծի տակ։ Իմ կեանքիս մէջ երբէք ես այդպիսի բաւականութիւն չեմ զգացել, երբ տեսայ, որ այդ միութիւնը առանց մի կաթիլ արիւն թափելու կատարվեցաւ։ Պէտք է շնորհակալ լինել թիւրքաց սուլթանից, որ նպաստեց այդ խաղաղ գործի աջողութեանը, բայց պէտք է աւելացնել, պարոններ, որ սուլթանը և նրա կառավարութիւնը գիտէին, որ գործ ունեն այնպիսի մարդկերանց հետ, որոնք վճռել են հասնել իրանց նպատակին։ Այսպիսի դէպքերում թիւրքաց կառավարութիւնը կարող է նոյնքան բարեմիտ լինել, որքան և միւս կառավարութիւնները։ Անցնում եմ Աֆգանիստանին։ Աֆգանական քաջ ժողովուրդը կարող է հնդկական կայսերութեան համար յուսալի պաշտպան լինել ռուսաց տիրապետութիւնների դէմ, եթէ ենթադրենք, որ այդպիսի պաշտպանութեան կարօտութիւն կունենանք և գլխաւորապէս նա բարոյական պաշտպան կարող է լինել, որին ես աւելի եմ հաւատում, քան թէ թնդանօթներին և հրացաններին, լեռներին և գետերին։ Բարոյական պաշտպանութիւնը, որի մասին ես խօսում եմ, աւելի յուսալի է Հնդկական կայսերութեանը առուած բնական սահմաններից, որոնց մարդկային ոյժը անկարող է խորտակել։ Հնդկաստանի կառավարիչների մի շարքը հետևում էր այդ խոհեմ քաղաքականութեանը յարգելով աֆգանցիների իրաւունքները և չը խառնվելով նրանց ներքին գործերի մէջ։ Բայց երեք տարի առաջ այդ խոհեմ քաղաքականութիւնը անուշադիր թողնվեցաւ և աֆգանական լեռների մէջ նորից արիւն թափվեցաւ։ Մենք գրաւեցինք Աֆգանիստանը և Բենջի համար։ Նրա համար, որ բարեկամներին թշնամի դարձնենք և ոչնչացնենք բարոյական սահմանը Ռուսաստանի և Հնդկաստանի մէջ։ Գենեռալ Բոբերտսի հեռագիրը նախկին կառավարութեանը մի տխուր խոստովանութիւն է։ «Յիշեցէք, որ աֆգանցիք անհաշտ և խորը կերպով մեղ ատում են»։ Այսպիսով մենք ուղարկեցինք Աֆգանիստան 70,000 զօրք առանց պարլամենտի և ժողովրդի կիսութեան։ Այդ պատճառով մեր մինիստրութեան առաջին հոգն էր ազատվել այդ անտանելի դրութիւնից, որի մէջ մեզ դրին մեր նախորդները և այժմ ուրախութեամբ կարող եմ ասել, որ մենք հասանք մեր նպատակին։ Աֆգանցիները ազատ են և, եթէ մինչև այժմ նրանք չը գիտեն, թէ ում հպատակվեն, դրա մէջ նրանք այնքան մեղաւոր չեն, որքան մենք։ Ներկայումս հասարակական կարծիքի ուշադրութիւնը կենտրոնացած է Եգիպտոսի վրա, որի վերաբերութեամբ, պէտք է գոհունակով խոստովանել, նախկին կառավարութեան քաղաքականութիւնը օգտակար հետևանքներ ունեցաւ։ Անգլո-Ֆրանսիական հսկողութիւնը օգուտ տուեց ոչ թէ միայն եգիպտական ֆինանսներին, այլ և Եգիպտոսի գիւղական ազգաբնակութեանը, ազատելով նրան ճնշված դրութիւնից։ Այդ պատճառով մենք կաշխատենք Եգիպտոսում գործել կատարեալ համաձայնութեամբ Ֆրանսիայի հետ, որ դժուար չէ պահպանել։ Մենք աշխատեցինք առաջն առնել ամեն տեսակ անբարեկամութիւնների թիւրքաց սուլթանի և Եգիպտոսի մէջ և յոյս կայ, որ այդ կողմից մենք կը հասնենք մեր նպատակին։ Մենք, եթէ այդ անհրաժեշտ չը լինի, չենք աշխատի ընդարձակել մեր միջամտութեան չափերը եգիպտական գործերի մէջ, հետևելով այն սկզբունքին, թէ իւրաքանչիւր ժողովուրդ իր երկրի տէրը պէտք է լինի։ Մենք համոզված ենք, որ Անգլիայի համարումը բարձրացնելու համար պէտք է ապացուցանել ամենքին, որ Անգլիան միայն արդարութիւն է ցանկանում, որ նա ոչ ոքին այլ սկզբունքներ և օրէնքներ չէ տալիս, բացի իրանց ցանկացածը։ Ինչ կը վերաբերի Անգլիայի ներքին քաղաքականութեանը, ես թէպէտ այն կարծիքի եմ, որ շատ բանին համբերութեամբ պէտք է վերաբերվել, բայց պէտք է ասեմ, որ մի քանի բան մեզանում չափազանցեցրած է։ Երբ ես լսում եմ, որ ազատամիտները անտարբեր են դէպի Անգլիայի փառքը, նրա հարստութիւնը, արդիւնաբերութիւնը, ես ակամայ մտածում եմ, որ դրանց միայն պահպանողականները կարող են պաշտպանել։ Հեռու երկիրների մասին ես չեմ խօսի, բայց կը հարցնեմ. ո՞ւմ քաղաքականութիւնը Անգլիային զօրեղ դարձրեց, շատացրեց նրա ազգաբնակութիւնը, բարեկեցեց անգլիական ժողովրդի բարոյական դրութիւնը, ժողովրդի մէջ կրթութիւն տարածեց։ (Աղաղակներ. «Գլադստոնի ազատամիտ քաղաքականութիւնը։») Ոչ, դուք պէտք է ուրիշ աւելի հաչակաւոր անուններ տաք։ Միայն դուք ձշմարիտ էք սուում, որ այդ բոլորը ազատամիտ կառավարութիւնները տուին։ Ազատամտութիւնը մեզ չէ խանգարում պաշտպանել Անգլիայի փառքը և, չը նայելով մեր խաղաղասիրութեանը, մենք երբէք չենք մոռանայ մեր պարտականութիւնը Վիկտորիա թագուհու գահի առաջ։ Մենք ոչ ոքի թոյլ չենք տայ ասելու որ մեր արած իրաւացի գեղծումների պատճառը երկիրը կամ մեր թուլութիւնն է։ Մենք բոլոր ուժերով կաշխատենք պահպանել օրէնքների ոյժը երկրի մէջ և կայսերութեան արժանաւորութիւնը արտաքին ամբողջ աշխարհի մէջ։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻԶ, 11 հոկտեմբերի։ Արմատականների ժողովը Ֆունիսի գործերի վերաբերութեամբ հրաւիրեց պատգամաւորների ժողովին խիստ քննութիւն անել և եթէ սահմանադրութիւնը գեղծված լինի, դատաստանի ենթարկել մինիստրներին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 հոկտեմբերի։ „Правит. Вѣст.“ լրագիրը հաղորդում է որ „Земство“ լրագրին երկրորդ նախազգուշութիւն է տուած։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 հոկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 75 կ., երկրորդ 92 ր. 25 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 92 ր. 62 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 219 ր., երկրորդ 213 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ր. 87 կ., երկրորդ 89 ր. 87 կ., երրորդ 89 ր. 87 կ., ոսկի 7 ր. 66½ կ։ Ռուսաց 1 ր. Լոնդոնի վրա արժէ 25,78½ պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 205 մարկ ½ պֆ։ Բորսայի տրամադրութիւնը շատ թոյլ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Նօբէլը, այն ժամանակ մենք ստիպված կը լինէինք շատ թերթեր լքցնել։ Բայց և այնպէս մենք կաշխատենք միւս անգամ առաւել հանգամանօրէն ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին նրա վիթխարի ձեռնարկութիւնների հետ, երբ բաւականաչափ և բազմակողմանի նիւթեր հաւաքած կը լինենք, որի մասին և հետևում ենք։ Իսկ առ այժմ մեր յօդուածի բուն նպատակը այդ չէ. մեր դիտաւորութիւնն էր միայն ուշադրութիւն դարձնել ընդհանրապէս բոլոր մանր և երկրորդական գործարանատէրերին և մասնաւորապէս հայերին սպառնացող հանգամանքների վրա, նոյնպէս հաստատել այդ վերջինների ինքնահաւանութիւնը և փարատել նրանց այն սխալ կարծիքը, որ նրանք երկու տարի առաջ արտադրում էին «Մշակի» ընդդէմ թէ հայերը երբէք տնտեսականութեան մէջ չեն կանվեր օտարազգիներից։ Ցանկալի էր իմանալ թէ այդ կարծիքը յայտնող պարոնները այժմ ինչ են մտածում. արդեօք նրանք հիմա էլ համոզված են, որ եւրոպացի արդիւնաբերողները չեն կարող խլել նրանց ձեռից նաւթային արդիւնաբերութիւնը։ Կասկած չը կայ, որ նրանք այժմ փոխած կը լինեն իրանց կարծիքը նախագուշակելով իրանց մօտ ապագայի պատկերը տխուր գոյներով նկարագրված, ինչպէս այդ կարելի է եզրակացնել նրանց խուլ տրտունջներից դէպի Նօբէլը։

Վերև մենք խօսեցինք միայն Նօբէլի մասին, բայց պէտք է չը մոռանալ, որ բացի նրանից կան նոյնպէս երկու մեծ ֆիրմաներ, որոնք ինչպէս առաջինը, նոյնպէս աշխատում են կլանել մանր և երկրորդական գործարանատէրերին։ Այդ երկու ֆիրմաներն են, Պալաշկովսկինը և Բագուի նաւթային ընկերութեանը (Бакинское нефтяное общество)։ Նրանք թէպէտ այժմ այնքան յառաջադիմութիւններ չեն արել ինչպէս առաջինը, բայց կասկած չը կայ որ նրանք ևս ժամանակով կը հասնեն նրան նայելով նրանց ձգտումներին, և վերջի վերջոյ ամբողջ արտադրութիւնը ֆոտոգէնի կընկնի այդ երեք խոշոր ֆիրմաների ձեռքը։ Եթէ այս տարի մանր և երկրորդական արտադրողները կարողացել են Ռուսաստանում ծախել իրանց ֆոտոգէնը, այդ այն պատճառով է եղել, որ միակ Նօբէլը, որ արտադրել է ընդամենը 3 միլլիոն պուդ—չէ կարողացել բաւականութիւն տալ բոլոր պահանջին, որ հասնում է մինչև 10 միլլիոնի։ Բայց ինչպէս հաւատացնում են, Նօբէլը մտադիր է եկող տարվանից օրական 50,000 պուդ պատրաստել և կասկած չը կայ, որ տարից տարի նա կաւելացնի իր արտադրութիւնը մինչև այն աստիճան, որ կարողանայ բոլոր պահանջներին բաւականութիւն տալ, այնուհետև էլ մնացէք բարեւաւ, դուք բոլոր մանր և երկրորդական գործարաններ, այնուհետև էլ մի կարծէք, որ մի ֆոնտ անգամ ֆոտոգէն ծախել կարողանաք Ռուսաստանում, քանի որ դուք այժմանից չէք աշխատի միանալ և կազմել մի ուժեղ ֆիրմա, գործածելով ձեր բոլոր միաւորած թէ մտաւոր և թէ նիւթական ոյժերը՝ մաքառելու ձեր միակ աշխատանքի աղբիւրին սպառնացող վտանգների դէմ։ Եթէ դուք ձեր յոյսը դրել էք նոր շինվող Բագու-Թիֆլիսեան երկաթուղու վրա, որը կարծում էք թէ բացվելուց յետ, միջոց կունենաք նաւթային մթերքների համար գտնել նոր վաճառատեղ Թիֆլիսից այն կողմերը, Տաճկաստանի խորքերում, Դաղղիայում և արտասահմանի զանազան տեղերում,—կրկնում ենք, եթէ ձեր փրկութեան միակ յոյսը սրանում էք գտնում, դուք չարաչար սխալվում էք, որովհետև այստեղ ևս ձեր ամեն մէկի ոյժերը առանձնապէս չեն կարող դիմանալ խոշոր ֆիրմերի զօրութեան դէմ։ Բագու-Թիֆլիսեան երկաթուղին պատրաստվելուց յետ Նօբէլի և թէ վերոյիշեալ երկու ֆիրմերի համար դժուար չի լինի ձեռք բերել, ինչպէս Ռուսաստանում ունեն հեղալից վագոններ և ոչնչացնել տակառներով տանելու սիստեման։ Ցիծաղելի կը լիներ կարծել թէ ձեզանից ամեն մէկը առանձնապէս կարող կը լինի անել այն, ինչ անչուշտ կանեն Նօբէլը և միւս երկու ֆիրմերը։ Ոչ ձեր մտաւոր ոյժը և ոչ էլ անչան կապիտալը կարող են դիմանալ այս հանգամանքում, այլ միայն մի բան, որը այսօրվանից պէտք է լինի ձեր դեվիզը, ձեր փրկութեան միակ յոյսը, այն է «միութիւն»։ Ահա ինչը կարող է ձեզ կլանվելուց ազատել։ Դուք էք դուք յուսահատվում, «յուսահատութիւնը փոքրոգութեան նշան է», ասում է ժողովրդական իմաստութիւնը։ Մենք տեսնում ենք, որ ձեզանից շատերը հիմիկուանից աշխատում են փոքր առ փոքր հեռանալ նաւթային արդիւնաբերութեան պարապմունքից. այդ ևս յիմարութիւն է, քանի որ կայ փրկութեան ճանապարհ, այն է ձեր բոլորի միութիւնը (союзъ). Եթէ դուք՝ բոլոր մանր և երկրորդական գործարանատէրեր, հաւաքվելով միասին կազմէք մի անհատին ընկերութիւն, այնուհետև, հաւատացնում ենք ձեզ, ոչ Նօբէլը կարող է յաղթել և ոչ մի ուրիշը ձեր դէմ կենալ. շատ կարելի է հէնց դուք բոլորովին յաղթէք, միայն հարկաւոր է ունենալ մի փոքր կամքի ոյժ, էնէրգիա։

Վերջին խօսքերը վերաբերվում են հայ գործարանատէրերին ու հանքատէրերին, որոնք, ինչպէս վերև ասել եմ, կազմում են մեծամասնութիւնը։ Թող. եթէ թուրքերը և ռուսները չեն կամենում, գոնէ հայերը աշխատեն միացնել իրանց ոյժերը, որպէս զի չը թոյլ տան, որ իրանց երկրի գանձերով միայն հազարաւոր վերստ հեռաւորութիւնից եկածները օգտվեն։

Հայ առևտրականները մի յատկութիւն ունեն, որով նրանք նմանվում են հրէաներին, այն է, որ երբ վաճառականութեան մի ճիւղում նրանք առաջին անգամ վնաս են կրում, իսկոյն յուսահատվում են և թողնելով նրան դիմում են ուրիշին։ Այդ այն պատճառով է, որ նրանք միշտ շտապում են որքան կարելի է շուտ օգուտներ ստանալ իրանց ձեռնարկութիւնից. հայը այսօր իր ձեռքի կապիտալը գործ է դնում, իսկ վաղը կամենում է իմանալ թէ արդեօք նա ինչքան աշխատանք բերաւ։ Այդ յատկութիւնը, որքան օգտաւէտ է մանր առևտրական գործերում, նոյնչափ վնասակար է խոշոր ձեռնարկութիւններում, որոնց հետևանքները շատ ուշ են յայտնվում քան թէ առաջինների։ Ով որ քիչ թէ շատ ծանօթ է հայ առևտրականների ու վաճառականների բնաւորութեան հետ, նրա համար շատ հեշտ է իմանալ, թէ մինչև որ աստիճան նա անհամառ է։ Մի գործ, որ սկսում է հայը, շատ հազիւ է պատահում, որ նա մինչև վերջը տանի նրան։ Այսօր մագազինում նստած արշին ապրանքներ է վաճառում, վաղը տեսնում ես հաւաքեց մագազինը և սկսեց կապալառութիւնով պարապել։ Այս տարի հանքատէր է և մեծ օգուտներ է ստանում, իսկ միւս տարի, երբ նրա գործերը իրանց սովորական ուղղութիւնից չեղվում են, տեսնում ես հանքերը ծախեց և սկսեց գործարան շինել, որ ֆոտոգէն պատրաստի. երրորդ տարին, երբ տեսնում է, որ գործարանը ևս վնաս բերաւ, նա ծախում է նրան և նաւեր առնում, որ նաւարարութիւնով պարապի։ Մի խօսքով որ գործը նա առժամանակ առաւել չտնարեր է համարում, նրան կըպչում, բայց վերջ ի վերջոյ նա բոլորից էլ վնաս է կրում, որովհետև չը գիտէ, թէ կապիտալը չատ յաճախակի ենթարկվելով փոփոխութիւնների, ամենայն անգամ նա կորցնում է իր մի յայտնի մասը։

Այդ հիման վրա մենք չենք կասկածում, որ Բագուի հայ գործարանատէրերը ևս կանեն նոյնը, այսինքն նրանք բոլորովին կը հեռանան նաւթային արդիւնաբերութիւնից, ինչպէս այդ անում են նրանցից մի քանիսը։ Բայց հարցը նը-րանում է, թէ կարող է արդեօք նրանց կապիտալը այնուհետև ուրիշ մի այնպիսի լայն և բազմօգուտ ասպարէզ գտնել, որպիսին էր նաւթայինը։ Հազիւ թէ. հազիւ թէ վնի արդիւնաբերութեան մի այնպիսի ճիւղ, որ կարող լինի տալ մեր գործարանատէրերին այն անհագին պըրօցէնտները, որը տալիս էր նրանց նաւթային արդիւնաբերութիւնը։

Մեզ շատ և շատ ցաւալի կը լինի, եթէ մեր վերոյիշեալ գուշակութիւնը կատարվի, այսինքն եթէ հայերը սկսեն հեռանալ կամ լաւն ասած, հեռացնեն նրանց միանգամայն նաւթային արդիւնաբերութիւնից։ Բայց որքան էլ ցաւալի լինի, դարձեալ այդ մի ակսիոմա է, որ նրանց համար էլ այսուհետև անկարելի կը լինի մրցել օտարազգիների հետ, եթէ, ինչպէս վերև ասացինք, նրանք չեն կազմի մի ահագին ընկերութիւն և չեն աշխատի հետևել Նօբէլի օրինակներին, որ նրանց փրկութեան միակ ճանապարհն է։

Վերջացնելով մեր յօդուածը, կրկին անգամ հրաւիրում ենք Բագուի հայ հանքատէրերին ու գործարանատէրերին չը զլանալ կազմել այդ ընկերութիւնը, եթէ ոչ, մեզ համար չատ ամօթ է մեր սեպհական երկրի գանձերը աչքներս բաց յանձնել հերօպացիներին։ Ցաւով ենք, որ մեր խօսքերը չեն ընկնի ապառաժի, այլ բուսաբեր և պտղաբեր հողի վրա և մենք բաղդ կունենանք մի ժամանակ տեսնել Բագուում մի ընկերութիւն «Բագուի հայոց նաւթային ընկերութիւն» վերնագրով։

Բագու. Շիրվանզադէ